[ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆ]

Վահրամ Փափազյանի անունը արվեստի և գրականության մեջ հիշվող այն անուններից է, որոնք մեր սիրտը ոչ միայն հիացումով ու բերկրությամբ են լցնում, այլև ազգային օրինական հպարտությամբ: Ում բախտ է վիճակվում հանդիպել նրան կյանքում, տեսնել, լսել նրան կամ մի երկու բառ փոխանակել նրա հետ – իրեն այնքան է երջանիկ զգում, որ երբ ծանոթների է տեսնում, սովորական ձևով չի ասում, թե «Փափազյանի մոտ էի», կամ «Փափազյանին տեսա», այլ «գիտե՞ս ում հետ էի խոսում – Վահրամ Փափազյանի» ...

Բայց Փափազյանի անունը ոչ միայն հպարտությամբ է լցնում մեր սիրտը, այլև, եթե կարելի է այսպես արտահայտվել, լիցքավորում է մեզ, բարձրացնում է մեզ մեր աչքում, ստիպում է խորհել, հաշվեհարդարի նստել սեփական եսի հետ. իսկ մե՞նք ով ենք, ի՞նչ ենք արել ու ոչ միայն մեզ, այլև մեր ժողովրդի համար, ի՞նչ կարող էինք անել, որ չենք արել ... Եվ ակամա, ուզես թե չուզես, գալիս են ուրիշ, նույնքան անխուսափելի հարցեր. ինչպե՞ս էր ինքը՝ Փափազյանը հասել այդ բարձունքին, այդ վարպետությանը, ի՞նչ աշխատանքով, ո՞րն է նրա արվեստի գաղտնիքը, չի՞ կարելի, արդյոք, այդ գաղտնիքին տիրանալ, օգտվել նրանից, օգտագործել նրա փորձը՝ չլինելով արտիստ, բայց ձգտելով նույնպես վարպետ լինել մեր ասպարեզում, ինչպես որ նա է վարպետ բեմի վրա:

Երբ ես ուզում էի գրի առնել այս տողերը, ինքս ինձ հաշիվ էի տալիս, որ բոլոր նրանք, ովքեր ուզում են Փափազյանի մասին շատ բան ասել, լավագույն դեպքում հասնում են այն բանին, որ ոչինչ էլ չեն կարողանում ասել: Ահա թե ինչու ես հաստատ որոշում կայացրեցի խոսել նրա արվեստի միայն մի կողմի, մի հատկանիշի մասին և ահա որն է դա:

Անվիճելի է, որ Փափազյանը ռեալիստ արվեստագետ է, թերևս մեր ժամանակի ամենախոշոր ռեալիստ դերասանը: Բայց ո՞րն է նրա ռեալիզմի հիմնական առանձնահատկությունը, ի՞նչն է դարձնում այդ արվեստն ինքնատիպ, կապում միայն իր՝

Փափազյանի անվան հետ: Չէ՞ որ ռեալիստ արվեստագետ են և Վաղարշ Վաղարշյանը, և Ավետ Ավետիսյանը, ինչպես և շատ ուրիշներ, նույնպես տաղանդավոր և սիրելի անուններ: Փափազյանի ռեալիզմը, ըստ իս, մի փոքր այլ երանգներ, այլ գունավորում ունի. և եթե թույլատրվեր մի բառով արտահայտել, ես այն կանվանեի մոնումենտալ ռեալիզմ:

Հարկավոր չէ թատերական արվեստի մասնագետ լինել, նկատելու համար Փափազյանի արվեստի հարաճուն վերելքը: Ում վիճակվել է Վարպետի Օթելլոն տեսնել երեսնական թվականներին, նա կվկայի, որ դա և նույն Մավրն է, և նույնը չէ: Փափազյանն այն հազվագյուտ արտիստներից է, որոնք չեն բավարարվում ձեռք բերած նվաճումներով, և ինչքան շատ են կատարյալ դառնում մեզ համար, այնքան իրենք ավելի են կատարելության ձգտում և այդպես էլ փակում են իրենց կյանքի ուղին՝ չհասնելով բուն կատարյալին: Փափազյանի Օթելլոն մի քսանհինգ տարի առաջ այնքան ավարտված մի ստեղծագործություն էր, որ ոչ միայն մեզ, այլև մասնագետ քննադատներին թվում էր, թե այդ պատկերի վրա այլևս ոչ մի գիծ չի կարելի ավելացնել: Եվ այնուհանդերձ, Վարպետը շարունակեց աշխատել այդ կերպարի վրա, շարունակեց նոր ու նոր շտրիխներով (թերևս մասամբ մեզ համար աննկատելի) ազնվացնել նրան, հարստացնել նորանոր բարեմասնություններով: Եթե մենք ցանկանանք մի բառով արտահայտել այդ փոփոխությունը, կարող ենք ասել, որ նա ավելի ու ավելի մարդկայնացել է, դարձել է մեզ մոտ ու հարազատ, այլ կերպ ասած՝ առավել ռեալիստական է դարձել:

Եվ իսկապես, չնայած իր «ռոմանտիկական» արտաքինին (մեզնից ո՞վ իսկապես ազնիվ նախանձով չի լցվել, տեսնելով Փափազյանին մոտից, ինչպես այս րոպեին ես եմ տեսնում. մարդ ակամայից մտածում է, որ այստեղ, հին հունական դիցաբանության ոգով ասած՝ Զևսի մատը խառն է, այսինքն աստվածային զարմ է), ասում եմ՝ այդ ռոմանտիկական արտաքինին, որ մի տեսակ չի համընկնում սովորականի մեր պատկերացման հետ, նրա ստեղծած կերպարները զարմանալիորեն մարդկային են, հասկանալի, հարազատ: Նրա Համլետը, Լիրը, Օթելլոն, թագավոր կամ թագավորազն

լինելով հանդերձ մարդ են ամենից առաջ: Այդ անձնավորությունների մեջ հայտնաբերված մարդկայինն է հենց, որ այսօր հիացնում է մեզ և ոչ թե արտաքին կեղևը:

Տարբեր արվեստագետների մոտ ռեալիզմը տարբեր գունավորում է ստանում. այլ է Ռեմբրանդի ռեալիզմը և այլ՝ Միքելանջելոյինը, այլ՝ Ստենդալինը և այլ՝ Բալզակինը, այլ՝ Մոցարտինը, այլ՝ Բեթհովենինը: Ռեալիզմը նույնական չէ առօրեականության, սովորականի հետ: Վսեմ, բարձրաթռիչք ֆանտազիան զարդարում է ռեալիստներին նույնքան, որքան և ռոմանտիկներին, խտացումը, խոշորացումը, կենտրոնացումը արվեստի հիմնական հատկանիշներից են՝ անկախ ուղղություններից: Այս տեսակետից է ահա, որ ասում եմ, թե Փափազյանի ռեալիզմը մոնումենտալ է: Նրա Օթելլոն և մարդ է սովորական առումով, և հերոս: Ավելի ճիշտ՝ մարդ է, որ հերոս է դառնում՝ իր մեջ հայտնագործելով այնպիսի ուժեր, որոնք միայն հերոսական բնավորություններին են հատուկ: Եվ հենց դա էլ այն ինքնատիպն ու առանձնահատուկն է, որ նրա արվեստը տարբերում է մեր մյուս դերասանների արվեստից:

Ավելի պարզելու համար միտքս, ես մի օրինակ կբերեմ իմ սիրած արվեստի բնագավառից:

Ահա մենք անցնում են Երևանի փողոցներից մեկով: Եթե շենքերը նոր են, ապա նրանք անպայման գրավիչ են և նրանց մոտով անտարբեր անցնել չի կարելի: Մեծ մասամբ դրանք հիացնում են մեզ իրենց ճարտարապետական մտահղացմամբ, կատարման արվեստով, հիանալի քարով և այլն: Գոհ մեր տեսածից, մենք ցած ենք իջնում փողոցով: Եվ ինչու՞ գոհ չպետք է լինենք, այդ շենքերից շատերը բավարարում են մեր հասարակական և գեղարվեստական պահանջները: Ցած ենք իջնում փողոցով և հանկարծ մենք մեզ գտնում ենք Լենինի անվան հրապարակում՝ Կառավարական տան դիմաց: Մի րոպեում մեր տեսած շենքերի պատկերները հոդս են ցնդում: Մենք նայում ենք այդ շենքին լուռ ու կարկամած, նայում ենք և չենք կշտանում. ինչպիսի մաքրություն, ինչպիսի պարզություն, ինչ ռեալիզմ ամեն մի սյան, ամեն մի կարնիզի, ամեն մի խոյակի մեջ և, այնուհանդերձ, ամբողջությամբ առած՝ ինչպիսի մոնումենտալ շենք ...

... Այդպիսին է, իմ կարծիքով, նաև Վահրամ Փափազյանի արվեստը: